ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/5» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի գնահատման նիստ

ք. Երևան 10 դեկտեմբերի 2018թ. Ժամը 12:30

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ. Արչունց

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Թ. Զաքարյան Շ. Հարությունյան, Հ. Մելիքյան, Ա. Իսկանդարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Բաղդասարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթի (Դիմում-հայտարարություն) առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
5. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2. էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

2.1 էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտերը ներկայացվել են էլեկտրոնային ձևով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով՝ մինչև դեկտեմբերի 06-ը, ժամը 12:30-ն: էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է դեկտեմբերի 10-ին, ժամը 12:30-ին: Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ են ներկայացրել «Հայաուդիտ» ՍՊԸ և «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ մասնակիցները:

3.Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթի (Դիմում-հայտարարություն) առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 «Հայաուդիտ» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթուղթը՝ Դիմում-հայտարարություն, որը կազմվել և ներկայացվել է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

3.2 «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12)-րդ ենթակետի խախտմամբ: Մասնավորապես «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված Դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ»

ՍՊԸ մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

5.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

5.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ մասնակցի հայտում առա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցումն ուղարկելուն հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝		Հ. Արչունց
Գնահատող հանձնաժողովի անդամներ՝		Թ. Զաքարյան
		Շ. Հարությունյան
		Ա. Իսկանդարյան
		Հ. Մելիքյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝		Լ. Բաղդասարյան